Հայոց և Կոստանդիանոս կայսրն Հռոմայ, արդէն դաշնակից էին ընդ միմեանս 'ի քաղաքական իրս, առաւել եւս զօրացաւ այն սէր և ընտանութիւն նոցին 'ի քրիստոնէութեան. զի եթէ ունէաք 'ի ձեռին զհաւատարիմ և զանեղծ օրինակս Ագաթանգեղեայ և թղթոյն դաշանց, պարզ եւ մեկին յայտնի լինէր խնդիրն. սակայն եւ նա այնպէս անստոյգ եւ աւելորդ բաւից կուտակութեամբ աղաւաղեալ է, որ եթէ գոցի 'ի նմա ստոյգ ինչ՝ այն եւս համարի լինել կասկածելի և'ի կարգի ստութեան։ Զի եթէ էին առ այս ստուգագոյն յիշատակարանք, այնոքիկ եւս չհասին 'ի ձեռս մեր, միայն Յայսմաւուրս Ապրիլ 12 'ի վարս Տրդատայ ասի՝ թէ սորա է կառուցեալ զՎանս Բեթղեհէմի եկեղեցեաւն հանդերձ և զայլ եկեղեցիս յԵրուսաղէմ։ Եւ 'ի գիրս 70 Վանօրէիցն Հայոց յիշատակին եկեղեցիք և վանօրայք յանուն Տրդատայ, յորոց ոմանք յայտնեցան 'ի ժամանակս մեր հայեցի վերտառութեամբ, զորս ունիմք յիշել 'ի կարգին, թէպէտ Հ. Մ. Զամչեան իբրեւ առասպելս վարկանի զնոսա. Պոտ. Հայ. Ա. 650։ Այլք ասեն թէ Հեղինէ հիմնարկեաց զեկեղեցին Բեթղեհէմի, և Տրդատ արքայ 'ի գլուխ եհան զայն գործ. զի Հեղինէ 79 ամեայ եկն յԵրուսաղէմ և 80 ամեայ մեռաւ 'ի Նիկոմիդեա. յայտ է թէ այնպիսի մեծակառոյց շինուած՝ չէր գործ միոյ կամ երկու տարւոյ, զի միայն 90 յաղթ սիւն պատրաստել բաւական ժամանակի պէտս ունի։ Թէպէտ օտարազգիք ոչ ինչ ակնածելով 'ի սիրոյ և 'ի մտերմութենէ Կոստանդիանոսի և Տրդատայ, առ նախանձու և ատելութեան յորժամ լսեն զանուն արքային Հայոց զծաղու դան։ Իսկ Վենետիկեան Հարք, որք հանապազ դեգերին 'ի գիրս գտանել յարացոյց ինչ մտերմական եւ ընտանեկան սիրոյ և կապակցութեան 'ի միջի երկուց թագաւորաց, յառաջ բերեն պարբերական բանս 'ի դատաստանական գրոց Ինքնակալին՝ այսպէս. « Ինքնակալ Կոստանդիանոս օգոստոս առ Պրոկղիանոս (հազարապետ արքունի)։ Բաց առանին իրաց մերոց, և 'ի կաթուղիկէ եկեղեցեաց, և 'ի տանէ պայծառայիշատակ Եւսեբիոսի՝ որ երբեմն հիւպատոսն էր և Մագիստրոս այրուձիոյ, և Արշակայ (կամ Արշակունեաց) Հայոց արքայի՝ ոչ ոք այլ 'ի